ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 ապրիլի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

52
(2718)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆՈՐ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ԹԵԺ Է ՄԵԿՆԱՐԿՈՒՄ

Այսօրվանից մեկնարկում են ԱԺ նոր նստաշրջանի աշխատանքները:

ԱԺ այս նստաշրջանը խոստանում է թեժ լինել. թերեւս ամենաէպիկը ընդդիմադիր պատգամավոր Միհր Սահակյանին անձեռնմխելիությունից զրկելու հարցն է, որը ԱԺ վաղվա նիստում ընդգրկված երկրորդ հարցն է: Բացի սա, այս նստաշրջանում վերջապես խորհրդարանը ՀՀ մարդու իրավունքների պաշտպան է ընտրելու:

ՄԻՊ-ի հարցը կքննարկվի հենց նիստի սկզբում՝ որպես առաջին հարց: Հիշեցնենք, որ ՄԻՊ պաշտոնում Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովը առաջարկել է Անահիտ Արտյոմի Մանասյանի թեկնածությունը:

Ըստ «ԱԺ կանոնակարգ» օրենքի՝ Մարդու իրավունքների պաշտպանն ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Հավելենք, որ խորհրդարանականները այս նստաշրջանի ընթացքում պետք է նաեւ դատավորներ, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի եւ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամներ ընտրեն:



Վաղը ՀՀ ԱԺ-ն կքննարկի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միհր Սահակյանի նկատմամբ հանրային հետապնդում հարուցելու դատախազության միջնորդությունը. ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը կներկայացնի: Համաձայն «ԱԺ կանոնակարգ» օրենքի՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ՝ ձայների մեծամասնությամբ, այսինքն՝ 71 պատգամավոր ունեցող ՔՊ-ն միայնակ կարող է հավանություն տալ միջնորդությանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ն Միհր Սահակյանի մասով միասնական որոշում ունի, ինչպես Սեյրան Օհանյանի ու Արմեն Չարչյանի դեպքում էր. կգան եւ համաձայնություն կտան ընդդիմադիր պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու միջնորդությանը: Ընդ որում՝ եթե Օհանյանի ու Չարչյանի դեպքում իշխող ֆրակցիայի ներսում տարաձայնություններ եղել են, ապա Միհր Սահակյանի դեպքում իշխանականներն ավելի «մարտական» են տրամադրված: Ի դեպ, ընդդիմությունը եւս մասնակցելու է նիստին եւ օգտագործելու է ՔՊ-ականների մասնակցությամբ աղմկահարույց միջադեպերի ողջ «զինանոցը»: ՔՊ-ն խոցելի վիճակում է գտնվում հիմա՝ կուսակցականների վերջին պահվածքի ֆոնին:

ՀՀ վարչական դատարանի դատավորները մեկը մյուսի հետեւից վերադարձրել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հայցերը: Ինչպես հայտնի է, Սիսիանում համայնքապետի ընտրություններից հետո «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը դատի էր տվել «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Սարգսյանին, ինչպես նաեւ «Քաղաքացու որոշում» կուսակցության քաղաքապետի թեկնածու Ավագ Ասատրյանին, ՔՈ անդամ Վարդան Բալյանին, եւ դատարանից պահանջում էին, որ ստիպի ԱԺ պատգամավորին եւ մյուս անձանց Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 40.1 հոդվածով նախատեսված կարգով վարչական պատասխանատվության ենթարկել: Իսկ ի՞նչ են արել վերոնշյալ անձինք, որ նրանց ՔՊ-ն հասցրել է դատարանի դռները: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ՔՊ-ն նրանց մեղադրում է լռության օրը հակաքարոզչություն անելու համար: Արդյունքում դատարանը բոլոր հայցերը հետ է վերադարձրել, որտեղ թերություններ են եղել:

Քաղաքական իշխանություններն օրերս պաշտոնից ազատված ԴԱՀԿ ծառայության նախկին պետ Սերգեյ Մեղրյանին առանց աշխատանքի չեն թողնի: «Ժողովուրդ օրաթերթի տեղեկություններով՝ ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանի ընկերոջը խոստացել են իր հարազատ համակարգ վերադարձնել եւ Վճաբեկ դատարանում դատավոր նշանակել: Ասել է թե՝ Սերգեյ Մեղրյանը կվերադառնա իրեն հոգեհարազատ ոլորտ:

ԲԱՐՁՐԱՁԱՅՆՈՒՄ ԵՆՔ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՍԱԴՐԱՆՔՆ ԷՐ

Ադրբեջանցիներն ապրիլի 4-ին հերթական ահաբեկչական քայլն էին իրականացրել արցախցիների նկատմամբ՝ արգելափակելով ՌԴ խաղաղապահների մեքենան, որով 27 արցախցիներ Գորիսից վերադառնում էին Ստեփանակերտ: Արցախցի չորս կանանց ինքնազգացողությունը միջադեպի հետևանքով վատացել էր, նրանցից 3-ը ուղղակի էին եղել: Չնայած տեղի ունեցածին՝ Հայաստանի իշխանություններին կողմից որևէ հայտարարություն չկա: Նախորդ անգամներում այսպիսի դեպքերում գոնե հայտարարություն էր տարածում ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, սակայն այս անգամ նրանք էլ են լուռ: Մինչ այս պահը որևէ երկիր կամ միջազգային կառույց չի արձագանքել ադրբեջանի հերթական հայատյաց քայլին:

«Ժողովուրդ» օրաթերթն այս մասին զրուցել է ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ, ՔՊ խմբակցության պատգամավոր Սարգիս Խանդանյանի հետ:

-Պարոն Խանդանյան, ինչպե՞ս կորակեք Ադրբեջանի այս քայլը, եւ ի՞նչ աշխատանք է տանում Հայաստանը՝ այս հարցը միջազգային հարթակներում բարձրաձայնելու ուղղությամբ:

-Դա իսկապես Ադրբեջանի հերթական սադրանքն էր ԼՂ հայության նկատմամբ, այս քայլը եւս մեկ դրսեւորում էր ապացուցելու, որ Ադրբեջանն ուզում է Լեռնային Ղարաբաղն առանց հայության թողնել: Սա Ադրբեջանի վարած էթնիկ զտման քաղաքականության շարունակությունն է, ինչը սկսվել է 44-օրյա պատերազմից հետո եւ ավելի սրվել է անցած տարի դեկտեմբերից, երբ Լաչինի միջանցքը շրջափակվեց: Եվ բոլոր միջադեպերը՝ թե՛ ոստիկանների սպանությունը, թե՛ գազամուղի պարբերաբար փակելը, եւ մյուս հումանիտար խնդիրները, որոնք առաջանում են ԼՂ-ում, Ադրբեջանի վարած քաղաքականության դրսեւորումներն են: Մեր խնդիրն է այս հացերը անդադար բարձրաձայնել միջազգային գործընկերների մոտ եւ ցույց տալ, որ Ադրբեջանը նման քաղաքականություն է վարում ԼՂ հայության նկատմամբ, որպեսզի մեծացվի Ադրբեջանի վրա ճնշումը. մեր բոլոր շփումներում խոսում ենք այս մասին, փորձում ենք բարձրաձայնել խնդիրը:

-Պարոն Խանդանյան, շատ քննարկվեց, որ Հայաստանի ԱԳՆ-ն որեւէ կերպ չի արձագանքել միջադեպին. նախորդ դեպքերում թեեւ ոչ կոշտ, բայց գոնե հայտարարություն տարածվում էր: Ինչու՞ այս անգամ լռեց ԱԳՆ-ն:

-Չեմ կարող մեկնաբանել՝ ինչու հայտարարություն չեղավ. գուցե լինի արձագանք, բայց ինչ վերաբերվում է ԼՂ-ում տիրող հումանիտար իրավիճակին եւ Լաչինի շրջափակմանը, թե՛ հրապարակային եղանակով, թե՛ հանդիպումների ընթացքում մեր դեսպանները եւ արտաքին գերատեսչության ներկայացուցիչները տարբեր հարթակներում խոսում են այդ մասին:

-Ադրբեջանի նման սադրանքների պայմաններում Հայաստանի իշխանությունն ինչպե՞ս է պատկերացնում խաղաղության շուրջ բանակցությունները, խաղաղության պայմանագրի կնքումն Ադրբեջանի հետ:

-Մենք կարծում ենք, որ դրա համար պետք է շարունակաբար բարձրացնել տեսանելիությունը մեր տարածաշրջանի ու տարածաշրջանում առկա խնդիրների վրա, մասնավորապես՝ Ադրբեջանի վարած քաղաքականության վրա, եւ մեր միջազգային գործընկերներին ու բարեկամ երկրներին պետք հորդորենք, որ ավելի ակտիվ ներգրավված լինեն մեր տարածաշրջանում խնդիրները կագավորելու հարցում: Մյուս կարեւոր քայլն էլ այն է, որ պետք է շարունակենք շարժվել մեր երկրի ժողովրդավարացման ուղով, ինստիտուտների զարգացման ուղով: Սա այն կարեւոր ինստիտուտն է, որ կարեւոր է եւ մեր երկիրը գրավիչ է դարձնում միջազգային հարթակում:

ՋՐՈՒՅՑԵՑ ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿՈՒԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՍԵՂԱՆ-ԱԹՈՌԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Սահմանամերձ Կութ համայնքի գյուղապետարանն ավերածություններից հետո աշխատանքային տեսքի բերեցինք:

Վարդենիս խոշորացված համայնքի Կութ վարչական շրջանի համայնքապետարանն է լուսանկարներում: Մեծ սենյակի առաստաղը բեկորների արդյունքում դարձել է «ցանց»: Թշնամու գնդակոծություններից ավերված համայնքապետարանը ո՛չ դուռ ուներ, ո՛չ լուսամուտ, ո՛չ գույք:

ՀՀ Ազգային ժողովին պատկանող գույքի եւ տեխնիկայի հաշվին՝ իմ նախաձեռնությամբ եւ ամիսներ տեւած հետեւողական նամակագրության արդյունքում գրասենյակային անհրաժեշտ պարագաները հասան Կութ (սեղան-աթոռից մինչեւ համակարգիչ): Պատուհանները նորոգվեցին USAID Armenia-ի կողմից, գույքը ձեռք բերվեց Ազգային ժողովից, մնաց տանիքի հարցը լուծենք... Նորոգումը դեռ չեմ ասում:

Հայաստանի անվտանգությունը սկսվում է առաջնագծում բնակեցված գյուղերից: Միշտ ձեզ հետ եմ, սիրելի՛ ժողովուրդ»:

ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՄԲ՝ ԱՀՌԵԼԻ ԳՈՐԾԱՐՔ

⇨ էջ 3

Երեւանի քաղաքապետարանն այս տարվա փետրվարի 23-ին մեկ անձից գնման շրջանակներում պայմանագիր է կնքել «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ հետ ջազ համերգ կազմակերպելու համար: Պատերազմի շեմին գտնվող մեր երկրում 89 մլն 280 հազար դրամ (մոտ 228 հազար դոլար) գումար է վճարվել ջազ համերգի համար ուղիղ մեկ ընկերությանը:

Իհարկե, առաջին անգամը չէ, որ մեկ անձից գնման ընթացակարգով նման ահռելի թվով գործարք է կնքվում, եւ այս դեպքում պատճառաբանված չէ, թե ինչու պետք է նման մասշտաբի համերգ կազմակերպել՝ վճարելով այսքան մեծ գումար: Ընդ որում, 2023 թվականի ապրիլին Երեւանում կայանալիք ծանրամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնության անցկացման համար կազմակերպված մրցույթի հաղթողը եւս այս ընկերությունն է եղել: Հաղթող ընկերության՝ «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից պարզ է դառնում, որ ընդհանուր ծառայության համար ԿԳՄՍ նախարարությունը փուլային եղանակով կվճարի 1 մլրդ 160 մլն դրամ, որ կազմում է 2.5 միլիոն դոլար: Նկատենք, որ «Բեգրաունդ Փրոդաքշն» -ի հետ նման պատկառելի գործարքներ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ են կնքում: Օրինակ՝ 2022 թվականին վարչապետի աշխատակազմը «Սթեյջ Սթայլ» ՍՊԸ -ի հետ 33 մլն 750 հազար դրամի պայմանագիր է կնքել, 40 մլն 410 հազար դրամի՝ «Բրիջդ» ՍՊԸ-ի, 80 մլն 183 հազար դրամի էլ դարձյալ «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի հետ է պայմանագիր կնքել: Պետական տոնացույցում ընդգրկված Անկախության օրվան նվիրված միջոցառումները Կառավարությունն իրականացրել էր մեկ անձից կատարվող գնման ընթացակարգով՝ առանց մրցույթի: Իսկ ո՞ւմ է պատկանում «Բեգրաունդ Փրոդաքշն» ընկերությանը, որ մշտապես հաղթում է առանց մրցույթների: «Բեգրաունդ Փրոդաքշընն» ՍՊԸ-ն գործունեություն սկսել է ծավալել 2018-ի հեղափոխությունից հետո: Հիմնադիր տնօրենը Արմեն Սարգսյանն է. վերջինս 2021 թվականի դեկտեմբերի 2-ին նշանակվել էր Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի օգնական, Վահագն Խաչատուրյանի՝ նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո՝ 2022 թ. մարտի 18-ին, ազատվել է աշխատանքից: Այժմ միայն Background Production-ի հիմնադիր գործադիր տնօրենն է:

ԻՆՉ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՆ ՍՊԱՍՎՈՒՄ

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը ապրիլի 12-15-ը կգործուղվի Սանկտ Պետերբուրգ:

Հայաստանի Հանրապետության ԱԺ պատվիրակությունը կմասնակցի ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի եւ լիագումար նիստերի, ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի մշտական հանձնաժողովների աշխատանքներին:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատվիրակության կազմում կլինեն Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, Ազգային ժողովի նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանը, Ազգային ժողովի տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Վաղարշակ Հակոբյանը, Ազգային ժողովի պատգամավոր Ալեքսեյ Սանդիկովը:

Պատվիրակության կազմում ընդգրկված են նաեւ խորհրդարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Տիգրան Սեյրանյանը, աշխատակազմի արարողակարգի վարչության պետ Ալեքսանդր Մխիթարյանը, Ազգային ժողովի նախագահի մամուլի քարտուղար Ծովինար Խաչատրյանը, օգնական Աշխեն Հայրապետյանը եւ այլք:

Գործուղման մեկնողներից 4-ի ճանապարհածախսը, ներկայացուցչական ծախսերը, օրապահիկի եւ գիշերավարձի վճարն արվելու է ՀՀ պետբյուջեից ԱԺ-ին այդ նպատակի համար հատկացված միջոցներով, իսկ մյուս 8 անձի գործուղման հետ կապված գիշերավարձի վճարումը կատարելու է ԱՊՀ ՄԽՎ-ն:

ԿՔՆՆԱՐԿՎԻ ԱՅՍ ՇԱԲԱԹ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ խորհրդարանն այս շաբաթ կքննարկի Մարդու իրավունքների պաշտպանի ընտրության հարցը:

ՄԻՊ պաշտոնում Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովն առաջարկել է Անահիտ Արտյոմի Մանասյանի թեկնածությունը:

Ըստ «ԱԺ կանոնակարգ» օրենքի՝ Մարդու իրավունքների պաշտպանն ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

Նույն օրենքի համաձայն՝ եթե ՄԻՊ չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո՝ տասնօրյա ժամկետում, թափուր մնացած պաշտոնում կարող են առաջադրվել նոր թեկնածուներ:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ «Հայաստան» խմբակցության երեկվա նիստին քննարկվել են այսօր մեկնարկելիք ԱԺ քառօրյայի հետ կապված հարցեր, այդ թվում՝ Միեր Սահակյանին անձեռնմխելիությունից զրկելու դատախազության միջնորդագրի հետ կապված հարցեր:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ որոշում է կայացվել մասնակցել այդ հարցով Ազգային ժողովի նիստին:

ԿՈՌՈՒՊՑԻԱ

ՋԱՋ ՀԱՄԵՐԳ՝89 ՄԼՆ ԴՐԱՄՈՎ

Երեւանի քաղաքապետարանը 20.02.2023թ. մեկ անձից գնման շրջանակներում պայմանագիր է կնքել «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ հետ ջազ համերգ կազմակերպելու համար 89.280.000 դրամով:

«Համաձայն «Գնումների մասին» օրենքի՝ այս դեպքում մեկ անձից գնում կարող է կատարվել, եթե ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, կամ եթե արտակարգ իրավիճակի առաջացման հետեւանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ: Մեկ անձից գնումով միջոցառում կազմակերպվել էր նաեւ գիրք նվիրելու օրը 35.000.000 դրամով:

Առաջին անգամը չէ, երբ մեկ անձից գնման ընթացակարգով նման ահռելի քանակի գնում է կատարվում, եւ այս դեպքում պատճառաբանված չէ, թե ինչու պետք է նման մասշտաբի համերգ կազմակերպել՝ վճարելով այսքան մեծ գումար:

Սա առաջին դեպքը չէ, երբ պայմանագիր է կնքվում հենց «Բեգրաունդ Փրոդաքշն» -ի հետ. 2022 թվականին վարչապետի աշխատակազմը «Սթեյջ Սթայլ» ՍՊԸ -ի հետ 33 մլն 750 հազար դրամի պայմանագիր է կնքել, 40 մլն 410 հազար դրամի՝ «Բրիջդ» ՍՊԸ-ի, 80 մլն 183 հազար դրամի էլ՝ «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի հետ: Պետական տոնացույցում ընդգրկված Անկախության օրվան նվիրված միջոցառումները Կառավարությունն իրականացրել էր մեկ անձից կատարվող գնման ընթացակարգով՝ առանց մրցույթի:

Անդրադառնալով առանց մրցույթի պետությունից տասնյակ միլիոններ ստացող կազմակերպություններին՝նշենք, որ դրանցից «Սթեյջ Սթայլ» ընկերությունը, ըստ պետական ռեգիստրի տվյալների, հիմնադրվել է 2013 թվականի սեպտեմբերին: Այս ընկերությունը հիմնադրման օրվանից առ այսօր պետական կառույցների հետ հարյուրավոր միլիոնների շուրջ երեք տասնյակ պայմանագիր է կնքել, սակայն ուշագրավ է, որ 2013 թվականից հիմնադրված ընկերությունը, ըստ գնումների կայքի, միայն 2018-ի իշխանափոխությունից հետո է սկսել բյուջեի հաշվին ծառայություններ մատուցել: Միայն 255 մլն դրամի ծառայություններ է մատուցվել Հանրային հեռուստաընկերությանը, ինչպես նաեւ վարչապետի աշխատակազմին, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը եւ Լոռու մարզպետարանին: 2021 թվականից ընկերության սեփականատեր է դարձել Բագրատ Դիվանյանը, որը հիմնադրման օրվանից զբաղեցրել է գործադիր տնօրենի պաշտոնը:

Իսկ, ահա, «Բրիջդ» ՍՊԸ-ն այս տարի միայն ԿԳՄՍ նախարարության հետ շուրջ 300 մլն դրամի պայմանագիր է կնքել Երգի պետական եւ Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոններում աշխատանքներ իրականացնելու համար: 2015 թվականին հիմնադրված այս ընկերությունը պետական կառույցներին խոշոր գումարներով ծառայություններ սկսել է մատուցել այս տարվանից: Անկախության օրվա միջոցառումների բյուջեից ամենամեծ բաժինը՝ 80 մլն դրամ ստացող «Բեգրաունդ Փրոդաքշընն» ՍՊԸ-ն էլ գործունեություն սկսել է ծավավել հեղափոխությունից հետո: Ըստ գնումների կայքի՝ այս ընկերությունը ծառայություններ է մատուցում միայն վարչապետի աշխատակազմին: Մեկ այլ օրինակ եւս. «2023 թվականի ապրիլին Երեւանում կայանալիք ծանրամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնության անցկացման համար կազմակերպված մրցույթի հաղթողը, այդ թվում՝ առաջնության խորհրդանիշը, ընտրվել են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի կողմից Եվրոպայի առաջնության կազմակերպման հետ կապված ծառայությունների ձեռք բերման նպատակով «ՀՀ-ՎԱ-ԵՄԾՁԲ-23/1» ծածկագրով կազմակերպված երկու փուլով մրցույթի ընթացակարգի արդյունքում: Ի կատարումն ՀՀ կառավարության 29.12.2022թ թիվ 2111-Ն որոշման 1-ին կետի 15-րդ ենթակետի՝ մրցույթի ընտրված մասնակից ճանաչված «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի հետ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից 09.03.2023թ. կնքվել է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների գնման թիվ «ՀՀՎԱ-ԵՄԾՁԲ-23/1-1» ծածկագրով պայմանագիրը»: Հաղթող ընկերության՝ «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից պարզ է դառնում, որ ընդհանուր ծառայության համար նախարարությունը փուլային եղանակով կվճարի 1.160.000.000 դրամ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆԻ «ՀՆՉԵՂ» ՄԻՋԱԴԵՊԵՐԸ

Հայաստանի խորհրդարանի ձեւավորումից ի վեր՝ մեր երկրի օրենսդիր մարմնում աղմկահարույց դեպքերն անպակաս են եղել:

«Ժողովուրդ» օրաթերթը պատմական ակնարկ է կատարել՝ հիշեցնելով խորհրդարանում պատգամավորների միջեւ արձանագրված մի շարք «հնչեղ» միջադեպերը, որոնք ծեծկռտուքով կամ ձեռնամարտով են ավարտվել: Այսպիսով, 1997թ.-ի սեպտեմբերին սեւ կատու է անցնում Պարույր Հայրիկյանի եւ նրա ամենահավատարիմ զինակից Արամազդ Զաքարյանի միջեւ: Հայրիկյանը ապտակում է Զաքարյանին լրտես կոչելու համար: Այդ ապտակը Հայրիկյանն անվանել էր հայրական:

Անահիտ Բայանդուրը գերագույն խորհրդի պատգամավոր իր գործընկեր Խաչիկ Ստամբոլցյանի մորուքից բռնել ու քաշքշել էր, մի քանի հոգով դժվարացել էին զատել տիկնոջ ձեռքերից Ստամբոլցյանին:

Աղմկահարույց հաջորդ միջադեպը խորհրդարանում արձանագրվել էր 2002 թ.-ին, երբ Ալրաղացի Լյովիկ մականվամբ հայտնի ՀՀԿ ական պատգամավոր Լեւոն Սարգսյանը ԱԺ նիստերի դահլիճում հարձակվել էր ընդդիմադիր պատգամավոր, ՀԺԿ-ական Արամայիս Բարսեղյանի վրա եւ հարվածներ հասցրել նրան:

2014թ.-ի նոյեմբերին ծեծկռտուք էր եղել ՀՀԿ-ական պատգամավոր Սամվել Ֆարմանյանի եւ ՀԱԿ խմբակցության ղեկավար Լեւոն Ջուրաբյանի միջեւ:

Վեճի առարկան եղել էր Ֆարմանյանի այն հայտարարությունը, թե ԱԺ ընտրությունների ժամանակ ԲՀԿ-ն իր ընտրատարածքում փող է բաժանել՝ հօգուտ ՀԱԿ-ի: Այս հայտարարությունն այնքան էր վրդովեցրել Ջուրաբյանին, որ նա պատիվ էր պահանջել Ֆարմանյանից, ապա, իր խոսքերով ասած, ծանոթացրել նրան իր ոտքի չափսին մոտիկից:

2017թ.-ի հոկտեմբերին ՀՀԿ-ական Արտաշես Գեղամյանը խորհրդարանի միջանցքում մոտեցել էր «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանին ու բռունցքներով հարվածել նրան: Փաշինյանն էլ նրան էր ոտքով հարվածել:

Հեղափոխական խորհրդարանը եւս բազմիցս աչքի է ընկել նման աղմկահարույց միջադեպերով:

Այսպիսով, 2020թ.-ի մայիսին խորհրդարանում ծեծկռտուք տեղի ունեցավ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Սասուն Միքայելյանի ու ԼՀԿ ղեկավար Էդմոն Մարուքյանի միջեւ: Երբ ելույթ էր ունենում ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավար Էդմոն Մարուքյանը, «Իմ քայլի» պատգամավոր Սասուն Միքայելյանը տեղից վեր կացավ եւ ապտակեց Մարուքյանին:

2020թ.-ի հունվարին հերթական ծեծկռտուքն էր տեղի ունեցել Ազգային ժողովի շենքի մոտ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Սիսակ Գաբրիելյանի եւ բողոքի ակցիա իրականացնող մի խումբ քաղաքացիների միջեւ: Գաբրիելյանը հարվածել էր քաղաքացիներից մեկին:

2021թ.-ի օգոստոսին ՔՊ խմբակցության պատգամավոր Վահագն Ալեքսանյանը ԱԺ դահլիճում ոտքով հարվածել էր ընդդիմադիր պատգամավոր Վահե Հակոբյանին:

Նույն օրը ԱԺ-ում տեղի էր ունեցել եւս մեկ միջադեպ ընդդիմադիրների եւ իշխանական պատգամավորների միջեւ, երբ ՔՊ խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանն իր ելույթում անդրադարձել էր «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանին՝վիրավորական արտահայտություններ թույլ տալով նրա հասցեին, որից հետո Օհանյանը շիշ էր նետել Սարգսյանի ուղղությամբ:

Հետաքրքիր է, որ բոլոր այս միջադեպերի մասով պատգամավորներից որեւէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել, գլխավոր դատախազը պատգամավորների հետեւից չի եկել, իսկ, ահա, այսօր գլխավոր դատախազը կգա խորհրդարան՝ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միեր Սահակյանի նկատմամբ քրեական հետապնդում սկսելու համար խորհրդարանի «թույլտվությունը» ստանալու: Սա աննախադեպ բան է հայրենի խորհրդարանի պատմության մեջ:

ԳՈՐԾ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՑՄՈՒՆՔԸ՝ ՄԻՋԱԴԵՊԻ ՄԱՍԻՆ

ArmLur.am-ը գրել էր, որ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը վաղը կգա խորհրդարան՝ Ազգային ժողովի պատգամավոր Մհեր Սամվելի Սահակյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին հարցը քննարկելու համար:

Դատախազը ներկայացրել է 18 էջից բաղկացած միջնորդություն: Այնտեղ մանրամասը ներկայացված է, թե օրենքի ինչ խախտումներ է թույլ տվել Մհեր Սահակյանը, եւ թե ինչ ցուցմունք են տվել նիստին ներկաները: Միջնորդության մեջ նշվում է նիստի ժամանակ Արծվիկ Մինասյանի՝ քննարկման թեմայից շեղվելու հանգամանքը. հակադրվել է Վլադիմիր Վարդանյանին, ձեռքով հարվածել է սեղանին, ոտքի կանգնել, բղավելով դիտողություն արել Վլադիմիր Վարդանյանին: Ապա նշվում է, որ նա շրջանցել է նստած Ալխաս Ղազարյանին, մոտեցել Վարդանյանին եւ աջ ձեռքով հարվածել նրա ձախ քունքային շրջանին: Այսպիսով, Մհեր Սահակյանին մեղադրանք առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով եւ 297-րդ հոդվածի 1-ին մասով:

Այժմ ներկայացնենք, թե ինչ ցուցմունք են տվել մի քանի վկաները. տուժող Վլադիմիր Վարդանյանն իր ցուցմունքում նշել է, որ աջ ձեռքին ինչ-որ առարկայով հարվածել է իր ձախ հոնքին: Վլադիմիր Վարդանյանը իր ցուցմունքում նշել է, թե մինչ այդ որեւէ գործողություն ինքը չի կատարել, Մհեր Սահակյանին ընդառաջ չի գնացել, ընդամենը կանգնել է տեղից, որպեսզի կարողանա բոլորին հանդարտեցնի: ՔՊ-ական պատգամավոր Ալխաս Ղազարյանը եւս իր ցուցմունքում նշել է այն մասին, որ Վլադիմիր Վարդանյանը կանգնած է եղել, սակայն տեղից չի շարժվել: Վերջինս նաեւ նշել է, թե հարվածի պահին շատ ուժեղ ձայն է լսել:

ՔՊ-ական պատգամավոր Վիգեն Խաչատրյանն իր ցուցմունքում կրկին նկարագրել է մարտի 31-ին տեղի ունեցածը: Նա եւս նշել է, թե Արծվիկ Մինասյանն է շեղվել քննարկվող թեմայից, որից հետո էլ քննարկումը շարունակելուն ուղղված կոչերին Մհեր Սահակյանը ընդհատելով է արձագանքել: Նա եւս նշել է, թե Վլադիմիր Վարդանյանը կանգնել է իր տեղից, սակայն ընդառաջ չի գնացել որեւէ մեկին:

Ցուցմունք է տվել նաեւ իրավական հարցերով ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը: Նրա խոսքով՝ Մհեր Սահակյանը մեկ անգամ աջ ձեռքով, բռունցքի ներսի հատվածով հարվածել է Վարդանյանի ձախ աչքի հատվածին: Ընդդիմադիր պատգամավորների ցուցմունքներն էականորեն տարբերվում են, եւ, օրինակ, պատգամավոր Գեղամ Նազարյանը նշել է, թե Վլադիմիր Վարդանյանը, բացի կանգնելուց, նաեւ քայլել է Մհեր Սահակյանի ուղղությամբ, վերջինս նույնպես կանգնել է, ու երբ Վարդանյանը հասել է նրան, աջ ձեռքով հարվածել է Վարդանյանին: Արծվիկ Մինասյանը եւս իր խոսքում նշել է, որ Վլադիմիր Վարդանյանը հանկարծակի կանգնել է եւ ագրեսիվ կեցվածքով քայլել դեպի Սահակյանը: Մհեր Սահակյանն, նույնը նշելով, նաեւ հավելել է. «Վլադիմիր Վարդանյանն ագրեսիվ քայլել է իմ ուղղությամբ՝ բղավելով. «Լավ եմ անում. ում վրա ուզեմ, կգոռամ»: Նա նշել է, թե ինքնապաշտանության նպատակով բնազդաբար է հարվածել Վլադիմիր Վարդանյանին:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԳՈՒՄԱՐ ԵՆ ՀԱՓՇՏԱԿԵԼ

ՀՀ ֆինչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գործերի քննության վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացված քննության արդյունքում պարզվել են ՀՀ կառավարության 2019թ. մարտի 29-ին «ՀՀ խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների եւ հատապտուղների հիմնման համար պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» 361-Լ որոշմամբ հաստատված պետական աջակցության ծրագրով, կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ, խարդախությամբ պետությունից առանձնատես խոշոր չափերի գումար հափշտակելու դեպքի մի շարք հանգամանքներ:

Պետությունը, նպատակ ունենալով այգետնկումներով խթանել հանրապետությունում պտղաբուծության եւ խաղողագործության զարգացումը, խաղողի, պտղի եւ հատապտղի արտադրության ծավալների ավելացումը, պտուղների եւ հատապտուղների ներմուծման փոխարինումը եւ արտահանման ծավալների ավելացումը՝ կառավարության որոշմամբ սահմանել է կատարված ծախսերի մասնակի փոխհատուցում:

Քննությամբ ձեռք են բերվել փաստեր առ այն, որ Արարատի մարզի բնակիչ Ս. Ղ.-ն եւ Երեւան քաղաքի բնակիչ Վ. Հ.-ն, մասնակցելով նշված ծրագրին, վարձակալությամբ յուրաքանչյուրն իրենց պատկանող հողամասերում հիմնել են ընկուզենու եւ նուշի ինտենսիվ այգի: Պետությունից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու դիտավորությամբ, փոխհատուցում ստանալու նպատակով, ի թիվս հիմնավորող այլ փաստաթղթերի, նրանք ՀՀ էկոնոմիկայի նախարարություն են ներկայացրել ծառայությունների մատուցման կեղծ պայմանագրեր: Արդյունքում չկատարած ծախսերի դիմաց 2022թ. ապրիլ ամսին Ս.Ղ-ն պետությունից ստացել է 24.225.000 ՀՀ դրամ, իսկ Վ. Հ.-ն՝ 26.125.000 ՀՀ դրամ գումար, որոնք խարդախությամբ հափշտակել են:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ նշված անձանց մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով եւ 457-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքների կատարման համար:

Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԸ ԿԳՆԱ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ վաղը ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը կգնա խորհրդարան: Այս անգամ պատճառը ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Մհեր Սահակյանն է: Մասնավորապես, դատախազը գալիս է խորհրդարան Ազգային ժողովի պատգամավոր Մհեր Սամվելի Սահակյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին հարցը քննարկելու համար:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ ապրիլի 7-ին էր գրել, որ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը կմտնի խորհրդարան «Հայաստան» խմբակցության պատգամավոր Մհեր Սահակյանի հետեւից: Նրա նկատմամբ պետք է քրեական վարույթ հարուցվի:

Հավելենք, որ Ազգային ժողովի պետահրավական հանձնաժողովի մարտի 31-ի նիստի ժամանակ, ըստ ընդդիմադիրների, նախ՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ու «Հայաստան» խմբակցության պատգամավորների միջեւ քաղաքական քննարկումը թեժ լեզվակռվի էր վերածվել, ապա, ըստ իշխանական պատգամավորների, Մհեր Սահակյանը բռունցքով հարվածել էր հանձնաժողովի նախագահ, իշխող խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյանի հոնքին: Իշխանականները դիմել էին իրավապահներին, Սահակյանը բերման էր ենթարկել ոստիկանության բաժին, ապա՝ ձերբակալվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՆԱՍԵԼ Է ԻՆՔՆ ԻՐԵՆ

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Բերդ քաղաքի նստավայրում ընթանում է Բերդ համայնքի Արծվաբերդ գյուղի բնակիչ Դավիթ Չոբանյանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասի պայմանագրային զինծառայող՝ 2022թ. նոյեմբերի 17-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, Արծվաբերդ բնակավայրի գերեզմանատանը՝ իր հոր շիրիմի մոտ, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված, հոր նկատմամբ կարոտից դրդված՝ փոքր ծալովի դանակով կրծքավանդակին եւ ձախ ձեռքի շրջանում կատարել է անդամախեղում՝ իրեն պատճառելով առողջության թեթեւ վնասի հատկանիշներ պարունակող մարմնական վնասվածքներ, որը կարող էր հանգեցնել զինվորական ծառայության պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն: Դ. Չոբանյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 528 հոդվածի 1-ին մասով. նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: Սույն քրեական գործով մեղադրանքը պաշտպանում է Լոռու կայազորի զինվորական դատախազությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 7-ից 10-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 109 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՈՌՈԳՈՒՄ ԵՆ ԴԵԲԵԴԻ ՋՐՈՎ

Մի քանի օր առաջ Լոռու մարզի Թեղուտ գյուղում կայացել են Թեղուտի հանքի արդյունահանման թույլտվության ժամկետը 13 տարով երկարաձգելու, հանքավայրի ընդլայնման նախագծի վերաբերյալ հանրային լսումներ: Ըստ այդ նախագծի՝ նախատեսվում է Թեղուտի հանքավայրը վերստին շահագործել, այդտեղ տարեկան արդյունահանել 7 միլիոն տոննա հանքաքար: Լոռու մարզում գործող մետաղական հանքերը եւ հանքաքարը վերամշակող ընկերությունները գրեթե 20 տարի սպառնալիք են Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշոր համայնքի՝ Դեբեդ հովտի պտղատու այգիների համար: Ներկայումս Ալավերդու պղնձաձուլական գործարանը չի գործում, սակայն Ախթալայի լեռնահարստացման գործարանի, Թեղուտ հանքից արտանետումների հետեւանքով Աղստեւ գետը աղտոտվում է ծանր մետաղներով: Գետի վտանգավոր ջրով են ոռոգվում Թումանյանի տարածաշրջանի Շնող, Ճոճկան, Այրում գյուղերի եւ Նոյեմբերյան խոշոր համայնքի բնակակավայրերի՝ Արճիսի, Այրում քաղաքի, Լճկաձորի, Հաղթանակի, Պտղավանի, Դեղձավանի, Բագրատաշենի, Դեբեդավանի հողատարածքները: Այդ բնակավայրերում անմշակ հողեր չկան, սեփականաշնորհված եւ վարձակալությամբ տրված բոլոր հողերը մշակում են, առավել եկամտաբեր են Դեբեդի ջրերով ոռոգվող դեղձի, կորոլյոկի եւ այլ մրգատեսակների այգիները: Դեբեդի հովտի այգեգործները բողոքում են, որ ծանր մետաղներով հագեցած գետի ջրով ոռոգելիս պտղատու ծառերի շուրջ հողը ամրանում է, ծառերը՝ չորանում: Դեռեւս 2008 թվականին Պտղավան գյուղի այգեգործները ծանր մետաղներով Դեբեդ գետի աղտոտվածության վերաբերյալ իրենց մտահոգություններն էին հայտնել այն ժամանակ գյուղատնտեսության նախարար Արամայիս Գրիգորյանին եւ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Արմեն Գեւորգյանին: Այն ժամանակ փոխվարչապետ Ա. Գրիգորյանը լրագրողիս հայտնել էր, որ գյուղնախարարությանը հանձնարարական է տրվել Դեբեդից նմուշներ վերցնել եւ Երեւանում փորձաքննություն կատարել, Բնապահպանության նախարարությունն էլ երկարաժամկետ մոնիտորինգ է իրականացնելու Դեբեդի ափի երկայնքով գործող գործարանների կողմից Դեբեդ արտանետումների վերաբերյալ: Փոխվարչապետը հավաստիացրել էր՝ եթե մոնիտորինգի արդյունքում պարզվի, որ գետի ջուրը թույլատրելի նորմայից ավելի է աղտոտված ծանր մետաղներով, ապա պետք է միջոցներ ձեռնարկել դրա պատճառները վերացնելու համար: Այդ ժամանակից 15 տարի է անցել, ծանր մետաղներով հագեցած Դեբեդի ջրով Դեբեդի հովտի այգիները, հողատարածքները ոռոգելու խնդիրը մնում է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

31 ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՀՀ ԱԳՆ-Ն ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Է ՏԱՐԱԾԵԼ

31 տարի առաջ՝ 1992թ. ապրիլի 10-ին, Ադրբեջանի զինված ուժերի կողմից իրականացվեց Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մարաղա հայկական բնակավայրում խաղաղ բնակչության ծրագրավորված դաժան կոտորածը, որի հետեւանքով շուրջ 5000 բնակչություն ունեցող բնակավայրն ամբողջությամբ ենթարկվեց էթնիկ զտման, ավելի քան 50 խաղաղ բնակիչ դաժանաբար սպանվեց, նույնքան էլ գերեվարվեց. տվյալներ, որոնք փաստագրված են Human Rights Watch եւ Amnesty International իրավապաշտպան կազմակերպությունների զեկույցներում: Այս մասին հայտարարություն է տարածել Հայաստանի ԱԳՆ-ն:

Հայտարարությունում նաեւ ասվում է. «Գերեվարվածներից շատերի ճակատագրերը մինչ օրս պարզված չեն, եւ վերջիններս համարվում են բռնի անհետացածներ:

Մարաղայի կոտորածը Սումգայիթում, Կիրովաբադում եւ Բաքվում կազմակերպված հայերի ջարդերի շարունակությունն էր եւ ադրբեջանական իշխանությունների՝ ազգային ինքնության հողի վրա զանգվածային ոճրագործությունների հերթական դրսեւորումներից մեկը: Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչության դեմ կանխամտածված ոճրագործությունները, ռազմական հանցագործությունները, դրանց անպատժելիությունն ու հերոսացումն Ադրբեջանի համակարգային քաղաքականության մաս կազմեցին եւ նոր դրսեւորումներ ստացան Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի 2016թ. ապրիլյան ագրեսիայի, իսկ ավելի մեծ մասշտաբներով՝ 2020թ. 44-օրյա պատերազմի ժամանակ, որի հետեւանքով տեղահանվեցին նաեւ Հադրութի, Շուշիի եւ հարակից շրջանների տասնյակ հազարավոր հայեր:

Պատահական չէ, որ ոչ միայն 1988-1991թթ. Լեռնային Ղարաբաղից տեղահանված հայերը տարիների ընթացքում երբեւէ հնարավորություն չեն ստացել վերադառնալ իրենց տներ եւ իրացնել իրենց իրավունքները, այդ թվում՝ տնօրինել իրենց մասնավոր սեփականությունը, այլ նաեւ ներկայումս, խախտելով 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթները, Ադրբեջանը խաթարում է տեղահանված անձանց եւ փախստականների վերադարձը Լեռնային Ղարաբաղ եւ հարակից շրջաններ, ինչը պետք է իրականացվի ՄԱԿ-ի փախստականների հարցերով բարձր հանձնակատարի վերահսկողության ներքո: Ավելին, խախտելով միջազգային իրավունքի նորմերը եւ իր իսկ ստանձնած միջազգային պարտավորությունները՝ պաշտոնական Բաքուն այս օրերին ադրբեջանցիներով է բնակեցնում իր վերահսկողության տակ անցած հայկական բնակավայրերը, հայերի տները, ինչպես, օրինակ, հայկական Թալիշ գյուղում:

Հատկանշական է նաեւ, որ կոպտորեն խախտելով հեղինակավոր միջազգային դատական ատյանների վճիռները՝ Ադրբեջանը բացահայտ կերպով շարունակում է պղծել, վանդալիզմի ենթարկել եւ ոչնչացնել հայկական կրոնական ու պատմամշակութային կոթողներն ու սրբավայրերը՝ նպատակ ունենալով իր վերահսկողության տակ գտնվող տարածքներից ջնջել հայկական հետքն առհասարակ: Միեւնույն ժամանակ, ամենաբարձր մակարդակով շարունակվում է հայության նկատմամբ ատելության քարոզը: Այս արձանագրումներն արդեն իսկ բազմիցս դատապարտվել են միջազգային կառույցների կողմից:

Մարաղայի ոճրագործությունից 35 տարի անց շուրջ չորս ամիս է, ինչ Ադրբեջանն ապօրինի կերպով արգելափակված է պահում Լեռնային Ղարաբաղը մնացյալ աշխարհի հետ կապող Լաչինի միջանցքը: Լեռնային Ղարաբաղում կանխամտածված կերպով հումանիտար ճգնաժամի ստեղծումը, ադրբեջանական զինված ուժերի կողմից Լեռնային Ղարաբաղում զինադադարի պարբերական խախտումներն ու ագրեսիվ գործողությունները, քաղաքացիական բնակչության շարունակական թիրախավորումն ու ահաբեկումը կրկին ապացուցում են, որ Ադրբեջանի նպատակը Լեռնային Ղարաբաղն էթնիկ զտումների ենթարկելն է:

Այսօր մենք հարգանքի տուրք ենք մատուցում Մարաղայի կոտորածների զոհերի հիշատակին: Նման ոճրագործությունների հետագա կանխարգելման համար եւս մեկ անգամ ընդգծում ենք միջազգային հանրության գործուն քայլերի, այդ թվում՝ տրամադրության տակ առկա միջազգային մեխանիզմների կիրառման հրատապությունը:

Հայաստանի Հանրապետությունը վերահաստատում է իր հավատարմությունը տարածաշրջանում երկարատեւ ու համապարփակ խաղաղության ու անվտանգության հաստատմանը, որը հնարավոր է Ադրբեջանի կողմից առավելապաշտական ու ագրեսիվ քաղաքականությունից հրաժարվելու եւ առկա խնդիրներին արդարացի լուծումներ փնտրելու ճանապարհով:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ՝ ԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը, հաշվի առնելով փոքր եւ միջին ձեռնարկատիրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին խոշոր տնտեսավարող սուբյեկտների կողմից մատակարարված ապրանքների դիմաց ուշ վճարելու եւ այլ կերպ տնտեսական գործունեությունը սահմանափակելու հնարավոր դեպքերը, մշակել է ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ ««Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը:

Մասնավորապես, նախագծերը նպատակաուղղված են հավասարակշռելու առեւտրային ցանց - մատակարարներ հարաբերությունները՝ նախատեսելով կարգավորումներ պայմանագրի համար ուշ վճարելու, պայմանագիր կնքելուց հրաժարվելու եւ բանակցային ուժեղ դիրքով պայմանավորված այլ դեպքերի համար:

Նախագծերով նախատեսվում է նաեւ կարգավորել գյուղատնտեսական արտադրանքի ձեռք բերման հարաբերություններում առկա խնդիրները, օրինակ՝ պայմանագրի համար ուշ վճարելը, որոնք պայմանավորված են իրացման շղթայում «պայմանագրային առավելություն» ունեցող կողմի առկայությամբ:

Նախագծերի ամբողջական փաթեթն արդեն իսկ ուղարկվել է շահագրգիռ սուբյեկտներին դիտողություններ եւ առաջարկներ ստանալու նպատակով: Փաթեթը հանրության համար հասանելի է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ https://www.e-draft.am/projects/5502/about հղմամբ:

Դիտողությունների եւ առաջարկությունների դեպքում քաղաքացիները կարող են մինչեւ սույն թվականի ապրիլի 21-ը դրանք ներկայացնել Մրցակցության պաշտպանության հանձնաժողով info@competition.am էլ. փոստի հասցեով:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 32 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 42-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԱՎԵԼԱՑԵԼ Է ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Այս տարվա առաջին եռամսյակում Հայաստանում արձանագրվել է երթեւեկության ինտենսիվության ավելացում: Այս մասին ArmLur.am-ը տեղեկանում է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամից, որն իրականացնում է ՀՀ ավտոճանապարհների երթեւեկության ինտենսիվության տվյալների հավաքագրում:

ՀՀ 4 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների (Մ-2, Մ-3, Մ-4, Մ-6) 5 կետերում տեղադրված են ավտոմոբիլային տրանսպորտի ինտենսիվությունը չափող 5 առցանց աշխատող հաշվիչներ:

«ՀՀ միջպետական նշանակության բոլոր 5 կետերում տեղադրված հաշվիչներն էլ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում արձանագրել են երթեւեկության ինտենսիվության ավելացում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ»,- ասված է հաղորդագրությունում:

Ավտոճանապարհների ինտենսիվության ցուցանիշները պահպանվում են «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի տվյալների բազայում: Դրանք անհրաժեշտ են HDM-4 տնտեսագիտական վերլուծական մոդելով մշակվող կարճաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ ծրագրերի, ինչպես նաեւ հիմնանորոգվող եւ նոր կառուցվող ճանապարհահատվածների նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելու համար:

ԿԱՄԵՑՎԵԼ Է ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Սյունիքի մարզային կենտրոնի տեսուչները ստուգում են իրականացրել անհատ ձեռնարկատեր Լենո Հարությունյանին պատկանող հացի (լավաշի) արտադրամասում եւ հայտնաբերել իրավական ակտերով սահմանված նորմերի մի շարք խախտումներ (Սյունիքի մարզ, գ. Շինուհայր):

Մասնավորապես՝

- արտադրական շինության նախագծումը, դրա կառուցվածքը, դասավորվածությունը չեն բացառել կենդանիների, այդ թվում՝ կրծողների եւ միջատների ներթափանցումը, կեղտի կուտակումը եւ բորբոսի առաջացումը,
- հատակի եւ պատերի մակերեւույթը պատրաստված չեն եղել անջրանցիկ, լվացվող նյութերից,
- արտադրական շինությունների, տեխնոլոգիական սարքավորումների եւ գույքի մաքրում, լվացում, ախտահանում չի իրականացվել,
- սննդամթերքի պատրաստման ընթացքում օգտագործվող պարենային հումքը եւ բաղադրիչները չեն պահվել թույլատրելի պայմաններում,
- սննդի կառույցն ապահովված չի եղել անձնակազմի համար հանդերձարանով, սակայն արտադրական տարածքում պահվել է անձնական եւ արտադրական հագուստ, չեն եղել լվացարաններ,
- անձնակազմը չի ենթարկվել պարտադիր պարբերական բժշկական զննությունների:

Արտադրամասի արտադրական գործունեությունը կասեցվել է, սահմանվել է հայտնաբերված խախտումները վերացնելու ժամկետ:

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ հաստատվել են բուհերի եւ գիտական կազմակերպությունների՝ 2023-2024 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության տեղերը:



Ինչպես հայտնում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության հասարակայնության հետ կապերի ու տեղեկատվության վարչությունից, որոշման նպատակը ՀՀ կառավարության ծրագրով պետության համար առաջնային եւ կարեւորություն ունեցող ոլորտները (ֆիզիկամաթեմատիկական, քիմիական, կենսաբանական տեխնիկական, գյուղատնտեսական, բժշկական գիտություններ), ինչպես նաեւ բուհերի եւ գիտական կազմակերպությունների ամբիոնները համապատասխան մասնագետներով ապահովելն է:

2023-2024 ուստարվա ասպիրանտուրայի ընդունելության համար հատկացվել է՝

- պետական կրթաթոշակով, նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ, առկա ուսուցմամբ՝ 151 տեղ,
- նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ, հեռակա ուսուցմամբ՝ 35 տեղ,
- պետական կրթաթոշակով, նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ, միջպետական համաձայնագրերով՝ 24 տեղ:

Առկա ուսուցման 151 տեղերից 98-ը (65 %-ը) նախատեսվում է տրամադրել բնական եւ տեխնիկական գիտություններին: Հեռակա ուսուցման 35 տեղերից հիշյալ ոլորտին նախատեսվում է տրամադրել 17-ը (49 %-ը):

2023-2024 ուստարվա ասպիրանտուրա ընդունելության նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը՝ ըստ մասնագիտությունների ձեւավորելիս հաշվի են առնվել.

- գերատեսչությունների ներկայացրած հայտերը,
- հետբուհական կրթական ծրագիր իրականացնող ուսհաստատությունների ներկայացրած հայտերը,
- հավանական գիտական ղեկավարների գիտաչափական տվյալները (հրապարակված հոդվածներ, գիտական աստիճան եւ այլն),
- բուհերի կամ գիտահետազոտական կազմակերպությունների ամբիոններում հիմնական աշխատողների (ըստ հաստիքացուցակի) թվաքանակը, տարիքային շեմը (65-ից բարձր), սովորող ասպիրանտների թիվը, ինչպես նաեւ անհրաժեշտ համապատասխան մասնագետների քանակը,
- բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող ուսհաստատություններում մագիստրոսի բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտների թիվը, ինչպես նաեւ մասնագիտությունների թիվը, որոնցով բուհերն ու գիտահետազոտական ինստիտուտներն իրականացնում են ասպիրանտական կրթական ծրագիր,
- նախորդ տարիներին հատկացված տեղերի եւ փաստացի ընդունելության արդյունքների վերլուծությունը (թափուր տեղեր, համալրված տեղեր),
- մրցույթի արդյունքում թափուր տեղերի առաջացման պատճառները:

Որոշմամբ սահմանվել է նաեւ, որ ասպիրանտուրայի առկա եւ հեռակա ուսուցման թափուր մնացած տեղերը, հաշվի առնելով բուհերի, Գիտությունների ազգային ակադեմիայի եւ գիտական կազմակերպությունների ներկայացրած լրացուցիչ հայտերը, վերաբաշխում է ԿԳՄՍ նախարարությունը՝ մասնագիտական քննությունից գերազանց՝ 18-20 միավոր եւ մրցույթի արդյունքում հավասար միավորներ ստացած դիմորդներին կամ մասնագիտական քննությունից գերազանց՝ 18 -20 (քսան) միավոր ստացած դիմորդներին՝ ըստ առավելագույն գնահատականի:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՏԱԴԻՐ Է ՏԵՂԵԿԱՑՆԵԼԸ

Ռուսաստանցիները, ՆԳՆ-ի տվյալներով, ամենից հաճախ ստացել են Իսրայելի, Ուկրաինայի, Հայաստանի, Թուրքիայի, Գերմանիայի եւ մի շարք այլ պետությունների քաղաքացիություն. հաղորդում է ՏԱՍՍ-ը:

«Առավելապես ՌԴ քաղաքացիները տեղեկացրել են Իսրայելում, Ուկրաինայում, Հայաստանում, Թուրքիայում, Գերմանիայում, Վրաստանում, ԱՄՆ-ում, Մոլդովայում, Իսպանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում քաղաքացիություն կամ կացության իրավունք հաստատող այլ փաստաթղթի առկայության մասին»,- հայտնել է գործակալության զրուցակիցը:

Ընդհանուր առմամբ, ՆԳՆ տվյալներով՝ անցյալ տարի ստացվել է ավելի քան 50 հազար ծանուցում ռուսաստանցիների մոտ այլ քաղաքացիության կամ օտարերկրյա պետությունում կացության կարգավիճակի առկայության մասին (այլ քաղաքացիության առկայության մասին՝ 31 հազար ծանուցում, օտարերկրյա պետությունում մշտական բնակության իրավունքի փաստաթղթի առկայության մասին՝ 19 հազար ծանուցում): 2022 թվականին այլ փաստաթղթերի առկայության մասին ծանուցումների ընդհանուր ցուցանիշը եւ թիվը կրճատվել են համապատասխանաբար 3 հազարով եւ 4 հազարով, մինչդեռ քաղաքացիության առկայության մասին ծանուցումների թիվն աճել է հազարով:

Ռուսաստանի քաղաքացին, որը ստացել է օտարերկրյա պետության անձնագիր կամ կացության թույլտվություն, պետք է պարտադիր տեղեկացնի Ռուսաստանի ներքին գործերի նախարարությանը: Այդ պահանջն անտեսելու դեպքում նա կարող է պատասխանատվության ենթարկվել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 19.8.3-րդ հոդվածով եւ վճարել տուգանք 500-1000 ռուբլու չափով:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

«ՏԱՂ. ՀՈԳՈՒ ՃԱՆԱՊԱՐՀ»

ՆՈՐ ՖԻԼՄ՝ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՏԱՂԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

«Վերածնունդ» հիմնադրամը, Սուրբ Գրիգոր Նարեկացու տաղերի հիման վրա, նկարահանել է հոգեւոր, երաժշտական «Տաղ. հոգու ճանապարհ» ֆիլմը: Ֆիլմի գաղափարն Արտակ Ալեքսանյանինն է, գործադիր ղեկավարները «Վերածնունդ» հիմնադրամի նախագահ Արթուր Ջանիբեկյանն է:

Ֆիլմի ռեժիսորը Վահե Յանն է, սցենարի համահեղինակն ու մենակատարը՝ Վահե Բեգոյանը: «Տաղ. հոգու ճանապարհ» ֆիլմը հիմնված է 7 տաղերի վրա, որոնք ներկայացնում է մենակատար Վահե Բեգոյանը գրաբարով: Ռեժիսոր Վահե Յանի խոսքով՝տաղերի հերթականությունն ընտրվել է՝ ըստ Նարեկացու՝ տիրոջ երկրային կյանքի կարեւոր իրադարձությունների պատումների: Բացի Նարեկացու 5 տաղերից, ֆիլմում ներառված է եւս 2 միջնադարյան տաղ՝ «Տիրամայրը հանդեպ Խաչի» եւ «Մարիամ Մագթաղենացի», որոնց հեղինակներն անհայտ են: Դրանք գրի է առել Կոմիտաս վարդապետը:

Մենակատարից բացի, ֆիլմում Նարեկացու յոթ տաղերը կարդում են յոթ հայտնի դերասաններ: Ֆիլմում նկարահանվել են Նազենի Հովհաննիսյանը, Խորեն Լեւոնյանը, Մարջան Ավետիսյանը, Տիգրան Ներսիսյանը, Նելլի Խերանյանը, Շանթ Հովհաննիսյանը, Ռոզի Ավետիսովան եւ Սամվել Թոփալյանը: Ֆիլմի ռեժիսորն ասում է, որ դերասանները կերպարներ չեն մարմնավորել, ընտրվել են ըստ տաղերի. «Գիտենք, որ Նարեկացին նաեւ միստիկ պոետ է, որով սկսվել է վերածնունդը հայ արվեստում ու հենց այս տաղերով, օրինակ՝«Աչքն ծով ի ծով»-ով: Դրանք ներկայացնելու համար պետք էին իսկապես խոսքի վարպետներ՝ մեծ փորձառությամբ, տաղանդով, հմտություններով: Դերասանների ընտրությունը պայմանավորված էր առաջին հերթին տաղերն ըստ արժանվույն ներկայացնելու, ընթերցելու նպատակով»:

Ապրիլի 4-ին «Մոսկվա» կինոթատրոնում կայացել է ֆիլմի փակ դիտումը, իսկ ապրիլի 5-ին, 6-ին, եւ 7-ին մուտքն ազատ էր: Բոլոր օրերին դահլիճը եղել է լեփ-լեցուն:

Վահե Յանը ցանկացել է ֆիլմը եւս մեկ անգամ դիտել, բայց դահլիճ մտնել այդպես էլ չի կարողացել. «Մարդիկ այնքան շատ էին: Էն լույսը, որ մենք մարդկանց ուզում էինք հասցնել ֆիլմով, ստացվել է: Ես հուզվեցի, երբ տեսա այդքան մարդկանց. փաստորեն, այդ լույսի պահանջն ու կարիքը կար: Դու անում ես մի բան, որի պահանջը կա. դրանից ավելի գերագույն զգացողություն չկա»:

Հանդիսատեսը, մեկ անգամ նայելով, չի բավարարվել: Շատերը ֆիլմի ցուցադրության երեք օրերին այդպես էլ չեն կարողացել մտնել դահլիճ. «Ինձ ֆիլմը շատ դուր եկավ: Շատ լավ նախաձեռնություն էր: Երեք օր էր ցուցադրվելու, ու ես ամեն ինչ մի կողմ դրեցի, որ գամ ու նայեմ: Ես շունչս պահած նայում էի ուղղակի»: «Տպավորություններս աննկարագրելի էին, շատ գեղեցիկ էր ներկայացված թե՛ մեր մշակույթը, թե՛ մեր եկեղեցին, թե՛ գրաբարի ու աշխարհաբարի համադրությունը: Գաղափարը մեծ էր, այն հիասքանչ էր, որ եկող սերունդը կարողանա հասկանալ Նարեկացի: Ֆիլմում Նարեկացու յոթ տաղերը կարդում են յոթ հայտնի դերասաններ, որոնք իրենց խաղով հանդիսատեսին են հասցնում տաղերի բովանդակությունը»:

«Հոգեւոր բավարարվածություն էր, իհարկե, քանի որ հնարավորություն ես ունենում կադրային առումով լիացնել աչքդ, ծանոթանալ մեր հոգեւոր երաժշտությանը, իսկ անցումները շատ հետաքրքիր էին, դերասանները՝ պրոֆեսիոնալ: Սա արժեքավոր գործ էր»:

«Դերասանական կազմը հոյակապ էր, լավ թիմ էր ընտրված, զգացվում էր, որ դերասանների ընտրությունը պատահական չէր: «Տաղ. հոգու ճանապարհ» ֆիլմում Նարեկացու գործերը հնչում են աշխարհաբարով: Իսկ ֆիլմի գեղեցիկ կադրերը Նարեկացու խոսքերը տեղ են հասցնում այսօրվա մարդու դիրքերից»:

«Շատ ողջունելի է նման ֆիլմ նկարահանելը, քանի որ մենք մեր Նարեկացուն ճանաչում ենք «Մատյան ողբերգությամբ», մինչդեռ տաղերն ավելի քիչ են հայտնի: Ֆիլմը լավ հնարավորություն էր ճանաչելու տաղերը»: «Տաղ. հոգու ճանապարհ» ֆիլմի նկարահանումները տեւել են կես տարի՝ յոթ խորհրդանշական վանքերում: Ապրիլի 9-ին՝ ժամը 19:30-ին՝ Հարության տոնին, ֆիլմը կցուցադրվի նաեւ «Արմենիա» հեռուստաընկերության եթերում:

ԶԱՏԻԿ

ՎԵՐԱԴԱՐՁ ԱՌ ԱՍՏՎԱԾ

Հայ առաքելական եկեղեցին երեկ տոնեց Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը: Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը կոչվում է նաեւ Զատիկ, որը նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից եւ վերադարձ առ Աստված:

Զատկի տոնին հավատացյալները ձու են ներկում: Ներկված ձուն համարվում է հարության եւ նոր կյանքի խորհրդանիշ: Կարմիր գույնը խորհրդանշում է խաչյալ Հիսուսի կենդանարար արյունը, որ թափվեց մարդկության փրկության համար: Ըստ Ս. Գրիգոր Տաթեւացու՝«Միայն Զատկին ենք ձու ներկում, որովհետեւ ձուն օրինակ է աշխարհի»: Իմաստուններն ասում են. «Դրսի կեղեւը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է Քրիստոսի արյունը: Եվ մենք, կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով, հռչակում ենք մեր փրկությունը»:

ԼԻԴԱ ԵԴԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԲԵՆԶԵՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ Է ՍՏԱՑԵԼ

Մադրիդի «Ռեալի» հարձակվող Քարիմ Բենզեման Սաուդյան Արաբիայում իր ֆուտբոլային ակադեմիան հիմնելու առաջարկ է ստացել. հաղորդում է Marca-ն: 35-ամյա ֆրանսիացի ֆուտբոլիստը Սաուդյան Արաբիայի ակումբներից մեկում հանդես գալու առաջարկ ունի: Պայմաններից մեկն էլ ֆուտբոլային ակադեմիա բացելն է:

Բենզեման ցանկանում է եւս մեկ մրցաշրջան անցկացնել Արքայական ակումբում: 2024-ի ամռանը նա պատրաստ է տեղափոխվել Սաուդյան Արաբիա, որը մտադիր է ընդունել 2030թ. աշխարհի առաջնությունը: Այդ նպատակին հասնելու ռազմավարության գլխավոր բաղադրիչն է առաջիկա տարիներին համաշխարհային աստղերի ներգրավումը Սաուդյան Արաբիայի լիգայում:

Բենզեման «Ռեալում» է հանդես գալիս 2009 թվականից: Այս մրցաշրջանում նա իտալացի Կառլո Անչելոտիի գլխավորած թիմի հետ մասնակցել է 18 հանդիպման, խփել է 14 գոլ, կատարել է 3 գոլային փոխանցում:

ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ 97–ՐԴՆ Է

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան՝ ՖԻՖԱ-ն, ներկայացրել է ազգային հավաքականների դասակարգման նոր աղյուսակը:

Հայաստանի ֆուտբոլի ընտրանին վարկանիշային նոր աղյուսակում 97-րդն է: Ընտրանին, նախորդ աղյուսակի համեմատ, նահաջել է երկու հորիզոնականով:

Լավագույն տասնյակում են Արգենտինան, Ֆրանսիան, Բրազիլիան, Բելգիան, Անգլիան, Նիդերլանդները, Խորվաթիան, Իտալիան, Պորտուգալիան, Իսպանիան:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ Է ՍՏԱՑԵԼ

Սլովակիան ներկայացնող «Դուբնիցա» ակումբի 20-ամյա ֆուտբոլիստ Էդուարդ Բագրինցեւը հայտնել է, որ հայկական անձնագիր է ստանալու ու պատրաստ շուտով կլինի նորամուտը նշել Հայաստանի ազգային հավաքականում:

«Նոյեմբերին ես փաստաթղթեր էի հանձնել անձնագիր ստանալու համար: Ինձ զանգահարեցին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայից եւ հայտնեցին, որ իմ անձնագիրը պատրաստ է: Շուտով ես հայկական անձնագիր կստանամ եւ պատրաստ կլինեմ նորամուտս նշել Հայաստանի ազգային հավաքականում: Ես շատ ուրախ եմ, անհամբերությամբ սպասում եմ այդ պահին»,- ասել է Բագրինցեւը:

Էդուարդ Բագրինցեւը Ռուսական ԲԿՄԱ ակումբի սան է, հանդես է եկել Ռուսաստանի երիտասարդական հավաքականի կազմում, Ռուսաստանի տարբեր տարիքային հավաքականների կազմում մասնակցել է Եվրոպայի առաջնության որակավորման խաղերի:

● *Ապրիլի 12-ին «Գոյ» թատրոնում տեղի կունենա «Կուզե՞ս՝քեզ աստղ նվիրեմ» թատերական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ Հայաստան մուտք գործելիս:

Հայրիկ Ղուկասյան (69 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ԵԱՏՄ մաքսային տարածք օդային տրանսպորտով առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման թույլատրվում է ներմուծել անձնական օգտագործման հետեւյալ ապրանքները (մեկ ֆիզիկական անձի հաշվարկով).

ուղեկցվող եւ չուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող ապրանքներ (բացառությամբ էթիլ սպիրտի, ալկոհոլային խմիչքների, գարեջրի), որոնց արժեքը չի գերազանցում 10.000 եվրոյին համարժեք գումարը, իսկ քաշը՝ 50 կգ-ը՝ ներառյալ ծխախոտ եւ ծխախոտային արտադրանք հետեւյալ չափաքանակներով՝

200 սիգարետ

կամ 50 սիգար (սիգարիլլա),

կամ 250 գրամ ծխախոտ,

կամ նշված արտադրատեսակների տեսականին ոչ ավելի, քան 250 գրամ ընդհանուր քաշով

«Զվարթնոց» օդանավակայան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անհրաժեշտ է հիշել՝ 3 լիտրից ավելի, բայց 5 լիտրից ոչ ավելի քանակությամբ ալկոհոլային խմիչքներ եւ գարեջուր ներմուծելիս 3 լիտր քանակական նորմի գերազանցման մասով ենթակա են վճարման 1 լիտրի դիմաց՝ 10 եվրո միասնական դրույքաչափով գանձվող մաքսատուրքեր, հարկեր:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ, Ե՞րբ է թույլատրվում փոփոխել աշխատանքի էական պայմանները:

Մարինե Մարգարյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատանքի վայրի, աշխատանքի վարձատրության չափի եւ (կամ) այն որոշելու ձեւի, արտոնությունների, աշխատաժամանակի (աշխատանքի եւ հանգստի) ռեժիմի, տարակարգերի եւ պաշտոնների անվանումների, աշխատանքային պայմանագրի տեսակի եւ (կամ) գործատուի փոփոխման դեպքում թույլատրվում է փոփոխել աշխատանքի էական պայմանները: Փոփոխելու դեպքում գործատուն պետք է գրավոր ծանուցի մինչեւ 1 տարի աշխատողին ոչ ուշ, քան 14 օր առաջ, 1-5 տարի աշխատողին՝ 35 օր առաջ, 5-10 տարի աշխատողին՝ 42 օր առաջ, 10-15 տարի աշխատողին՝ 60 օր առաջ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելիս մի կողմը գրավոր առաջարկում է մյուս կողմին լուծելու պայմանագիրը: Համաձայնության դեպքում մյուս կողմը 7 օրվա ընթացքում պետք է ծանուցի առաջարկ ներկայացրած կողմին, որից հետո կնքվում է գրավոր համաձայնագիր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Կիեւյան փողոցում տեղի է ունեցել ՃՏՊ. առկա է եղել վառելիքի արտահոսք:

Պարզվել է, որ բախվել են Mercedes-Benz (վարորդ՝ Ա. Շ.՝ ծնված 1966 թ., ուղեւոր՝ Ն. Ֆ.՝ ծնված 1973 թ.), Nissan Tiida (վարորդ՝ Հ. Ղ.՝ ծնված 1972 թ.), VAZ-2121 (վարորդ՝ Վ. Խ.՝ ծնված 1983 թ.) եւ Nissan Tiida (վարորդ՝ Թ. Մ.՝ ծնված 1989 թ.) մակնիշների ավտոմեքենաները. կան տուժածներ, սակայն նրանց կյանքին վտանգ չի սպառնում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 6	+11 + 15
Կոտայքի լեռներ	+ 2 + 5	+ 11 + 14
Կոտայքի նախալեռներ	+ 7 + 9	+15 +17
Գեղարքունիք	+ 2 + 5	+12 + 15
Լոռի	+ 2 + 6	+11 + 14
Տավուշ	+ 5 + 9	+12 + 16
Արագածոտնի լեռներ	+ 1 + 4	+10 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 6 + 9	+15 + 19
Արարատ	+ 8 + 11	+20 + 23
Արմավիր	+ 7 + 9	+20 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 3 + 5	+ 12 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 10	+20 + 23
Սյունիքի հովիտներ	+ 8 + 11	+24 + 28
Սյունիքի նախալեռներ	+ 6 + 9	+17 + 20
Արցախ	+ 8 + 11	+22 + 25
Երեւան	+ 8 + 10	+18 + 20

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.04.2023**
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*